

## Ֆինանսավորման և ներկայացվել շուրջ 200 գիտական ծրագիր

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսավորման և ներկայացրել շուրջ 200 գիտական ծրագիր: Ինչպես երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց գիտության պետական կոմիտեի նախագահ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, այդ թիվը զիջում է 2010-ի տվյալներին (711 թեմա): «Քանակի նվազումը պատճառաբանված է, քանի որ 711 թեմաների զգալի մասի ֆինանսական ծավալները փոքր էին, ինչն էլ հնարավորություն չէր տալիս դրանք հաջող իրականացնելու: Բացի այդ, կային թեմատիկ բազմաթիվ կրկնություններ», - ասաց նա՝ հավելելով, որ քանակի նվազումը պայմանավորված է նաև նրանով, որ գիտության պետական կոմիտեն բազմաթիվ միջազգային մրցույթներ է իրականացնում: «Մեր պետությունն այսօր թեմատիկ ծրագրերով ի վիճակի է 200 և փոքր-ինչ ավելի ծրագրեր ֆինանսավորելու. 711-ը խիստ ուռճացված էր», - նշեց Սամվել Հարությունյանը:

Ամփոփելով 2011-ի առաջին կիսամյակում կոմիտեի իրականացրած գործունեությունը՝ նա առանձնացրեց մի քանի կետեր: Խոսելով իրավական դաշտի կատարելագործման մասին՝ գիտապետկոմի ղեկավարն ասաց, որ կյանքի է կոչվել 2 կարևոր ծրագիր, որոնցից մեկի նպատակն է ապահովել հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացումը, ինչպես նաև դրանց համապատասխանեցումը հասարակության և տնտեսության արդի պահանջներին: Երկրորդ ծրագրի նպատակը գիտության ոլորտի հետագա զարգացումն ապահովելն է՝ ՀՀ կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սփյուռքի ջանքերի միջոցով:

Սամվել Հարությունյանը տեղեկացրեց նաև, որ ավարտվել է «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2011» մրցույթը, ըստ որի՝ 4-ական միլիոն դրամ է հատկացվել Արցախի գիտնականների ներկայացրած 5 ծրագրերի իրականացմանը:

Լիլիթ Գրիգորյան

«Եթե չշտկվեն՝ կպատժվեն»

«Բյուրականի աստղադիտարանում ստուգման պահին գրանցված 86 աշխատակիցների շրջանում ոչ ոքի հետ կնքված չէր աշխատանքային հարաբերությունները հաստատող որևէ փաստաթուղթ», - երեկ լրագրողների հետ հանդիպմանն ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Սա Գիտության պետական կոմիտեն հայտնաբերել է 2011թ. առաջին կիսամյակում պետական կառույցներում կատարված մոնիտորինգի ժամանակ: Նման ուսումնասիրություն կոմիտեն առաջին անգամ էր անում: Թիրախ էին ընտրված 3 գիտական կազմակերպություն՝ 6 ծրագրի մասով, 4-ը՝ ԵՊՀ-ում, 1 ծրագիր՝ ՀՀ ԿԳՆ Բժշկական սաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում, 1՝ ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում:

Բոլոր 3 կազմակերպություններում էլ հաստիքացուցակում ընդգրկված աշխատակիցների համար չի եղել դրույքաչափերի հաշվարկման միասնական հստակ համակարգ, ասում է կոմիտեի ղեկավարը, նշելով, որ մոնիտորինգի ընթացքում հայտնաբերվել են խախտումներ պետական գնումների ընթացակարգում: «Բժշկական սաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնը ներկայացրել էր 5 մլն 59 հազար դրամ ստանալու ֆինանսական հայտ եւ այդքան էլ ստացվել է ֆինանսավորում, որը պետք է ծախսվեր տվյալ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կենտրոնի ստուգման պահի դրությամբ ծախսվել էր ընդամենը 1 մլն 476 հազար դրամ, այսինքն՝ գումարը ստացվել էր չի ծախսվել, այն ոչ նպատակային է ծախսվել», - ասում է Սամվել Հարությունյանը: Իսկ լրագրողների այն հարցին, թե ի՞նչ պատասխանատվություն են կրել այդ կառույցները, պատասխանեց. «Համապատասխան հանձնարարականներ են տրվել, որ սխալները շտկվեն: Բացթողումները այնպիսին են, որ ուղղման ենթակա են: Եթե չշտկվեն, ապա կպատժվեն»:

Ս. Հարությունյանը նաեւ խոսեց «Քենդլ» նախագծի առաջիադացման մասին, նշելով, որ այս ծրագրի մասին կան տարակարծություններ: «Գիտնականներ կային, որ համարում էին, թե ծրագիրը խիստ կարելու է Հայաստանի համար, որոշներն էլ մտածում էին, որ մեր երկիրը պատրաստ չէ դրան: Բայց սառույցը հիմա հալվել է եւ աշխատանքներ են տարվում ծրագրի իրագործման ուղղությամբ», - ասում է նա:

ՀՌԻՓՄԻՄԵ ՀՌՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## Աշխատել են առանց աշխատանքային պայմանագրի

2011-ին շուրջ 201 գիտական ծրագրեր են ֆինանսավորվել՝ ի տարբերություն 2010-ի 711-ի: ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը պարզաբանեց, որ պատճառն այն է, որ այժմ չկան կրկնվող թեմաներ, իսկ 1 եւ 1,5 հաստիքային թեմաները նույնպես չեն մտնում ծրագիր:

«Գնալով ավելանում է նաեւ միջազգային մրցույթների մեր մասնակիցների ֆինանսավորումը, որի համար նախատեսված ծախսերը նույնպես կրճատված թեմաներից կուտակված գումարի միջոցով ենք փակում: Իսկ այս տարվա 201 թեմաներից յուրաքանչյուրին հատկացվել է մոտ 36.000 դոլար», - ասաց նա՝ ավելացնելով, որ իրենք մեծ տեղ են տալիս երիտասարդ գիտնականներին՝ գիտության երիտասարդեցմանը նպաստելու համար:

Նա ամփոփեց 2011թ. առաջին կիսամյակում կոմիտեի իրականացրած գործունեությունը՝ առանձնացնելով մի քանի հիմնարար կետեր: Խոսելով իրավական դաշտի կատարելագործման մասին՝ Ս. Հարությունյանն ասաց, որ կյանքի է կոչվել 2 կարեւոր ծրագիր, որոնցից մեկի նպատակն է եղել ապահովել հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացումը, ինչպես նաեւ դրանց համապատասխանեցումը հասարակության և տնտեսության արդի պահանջներին: Ծրագրի շրջանակներում միտում է դրված եղել բարձրացնել միջազգային գիտական տարածքի հետ բնագավառի ինտեգրվածության մակարդակը:

Իսկ ահա երկրորդ ծրագրի նպատակը գիտության ոլորտի հետագա զարգացումն ապահովելն է, մասնավորապես՝ ՀՀ կառավարության, մասնավոր բիզնեսի քաղաքացիական հասարակության ինստիտուտների եւ Սփյուռքի ջանքերի միջոցով: Ավարտվել է «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր 2011» մրցույթը, ըստ որի՝ 4-ական միլիոն դրամ է հատկացվել Արցախի գիտնականների ներկայացրած 5 ծրագրերի իրագործման համար, ընդ որում՝ գումարի 80 տոկոսը հատկացվել է ՀՀ բյուջեից, իսկ 20 տոկոսը՝ Արցախի:

«Արցախի գիտնականներն ունեն ծրագրին մասնակցելու համարժեք իրավունքներ, ինչ տեղի գիտնականները: Գիտական մեծ պոտենցիալ կա Արցախում», - նշեց Հարությունյանը: Նա տեղեկացրեց նաև, որ առաջին անգամ Հայաստանում անցկացվել է գիտական կազմակերպությունների մոնիտորինգ, որոնք բյուջեից բազային ֆինանսավորում են ստանում:

«Մոնիտորինգ անցկացվեց 3 գիտական կազմակերպություններում՝ 6 ծրագրի մասով, ընդ որում՝ 4 ծրագիր՝ ԵՊՀ-ում, 1 ծրագիր՝ ՀՀ ԿԳՆ Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում և 1 ծրագիր ,Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան ՊՈԱԿ-ում», - նշեց Հարությունյանը:

Այստեղ բացահայտվել են իրավական և ֆինանսական բնույթի խախտումներ, օրինակ՝ Բյուրականի աստղադիտարանի 86 աշխատակիցներից եւ ոչ մեկի հետ չկա կնքված աշխատանքային պայմանագիր, կամ էլ Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնի 21 աշխատակցից 8-ի աշխատանքային պայմանագրերը չկան՝ չնայած դրանք ժամանակին կնքվել են:

## Խախտումներ

Ընթացիկ տարվա ապրիլ-հունիս ամիսներին Գիտության պետական կոմիտեն մոնիտորինգ է անցկացրել մի շարք կազմակերպություններում: Ինչպես տեղեկացրեց կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, մոնիտորինգն իրականացվել է պետական բյուջեից բազային ֆինանսավորում ստացող 3 գիտական կազմակերպությունում՝ Երևանի պետական համալսարանում, Բժշկական սարքերի արտադրության միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում եւ Բյուրականի աստղադիտարանում, որտեղ բացահայտվել են թե՛ իրավական, թե՛ ֆինանսական բնույթի խախտումներ:

Ս.Հարությունյանի հավաստմամբ՝ մոնիտորինգի արդյունքում մի շարք շեղումներ են հայտնաբերվել: «Ֆինանսական միջոցների ծախսման որեւէ խախտում կամ շեղում ԵՊՀ-ում չի գրանցվել, սակայն եղել են ընդհանուր բնույթի խախտումներ աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման վերաբերյալ փաստաթղթերում», - նշեց նա՝ օրինակ բերելով Բյուրականի աստղադիտարանը, որտեղ ստուգման պահին գրանցված 86 աշխատակցից ոչ մեկի հետ կնքված չի եղել աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող որեւէ իրավական փաստաթուղթ:

Նրա խոսքով՝ 3 կառույցներում էլ չեն եղել դրույքաչափերի հաշվարկման միասնական համակարգեր: «Արձանագրվել են նաեւ պետական բյուջեից տրամադրվող միջոցների ոչ նպատակային ծախսումներ», - ասաց նա:

**ՀՀ Գիտության պետկոմիտեն 2011թ.-ի առաջին կիսամյակում ֆինանսավորել է 184 գիտական եւ 7 կիրառական ծրագրեր**

ՀՀ ԿԳՆ-ի Գիտության պետական կոմիտեն այս տարվա առաջին կիսամյակում ֆինանսավորել է 184 գիտական եւ 7 կիրառական ծրագրեր: Այս մասին առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփմանը նվիրված հուլիսի 18-ի ասուլիսում հայտնեց կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտություններ աջակցության ծրագիր-2010» բաց մրցույթի արդյունքներով ֆինանսավորել են 32 գիտական ծրագրեր, իսկ հիմնարար ազատությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ գիտական հետազոտությունների ծրագրի աջակցության համատեղ մրցույթի արդյունքներով՝ 17 գիտական ծրագրեր: Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի ներկայացված 43 հայտերից ֆինանսավորման են երաշխավորվել 17-ը: Սամվել Հարությունյանը կարեւորեց Արցախի գիտնականների հնարավորությունների ընդլայնումը: «Արցախի գիտնականները պետք է ունենան այն նույն հնարավորությունները, որոնք ունեն Հայաստանի գիտնականները: Հենց այդ նպատակով մենք ֆինանսավորել ենք նրանց 5 գիտական ծրագրեր», - նշեց կոմիտեի նախագահը: Ադրադառնալով Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համատեղ երկկողմ փոխգործակցության ծրագրին, Ս.Հարությունյանը հույս հայտնեց, որ այդ ծրագրի մասնակիցների գոնե 10%-ը կվերադառնա Հայաստան եւ իր գիտական գործունեությունը կշարունակի այստեղ, ինչն արդեն գոհացուցիչ հանգամանք է:

Ներկայացնելով կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները, նա անդրադարձավ «Քենդլ» նախագծին: «Այն պետական կարեւորագույն գիտական ծրագիր է, որը արժանացել է ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հավանությանը», - ասաց Ս.Հարությունյանը: Ներկայացվեց նաեւ «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագիրը», որի նպատակն է ապահովել հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացումը եւ համապատասխանեցումը արդի պահանջներին:

Ասուլիսում ներկայացվեցին նաեւ գիտական կազմակերպությունների մոնիթորինգի արդյունքները, ըստ որոնց բացահայտվել են թե՛ իրավական, թե՛ ֆինանսական բնույթի խախտումներ:

**Գիտության պետական կոմիտեն ընթացիկ տարում կֆինանսավորի 34 միջազգային գիտաժողով**

Գիտության համար այժմ բավականին ծանր իրավիճակ է, որովհետև Խորհրդային միության ժամանակաշրջանի հետ համեմատած ֆինանսավորման ծավալները պակասել են ավելի քան 10 անգամ: Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման կարծիք հայտնեց Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ հավելելով, որ դա իր բացասական հետեւանքներն է թողել գիտության զարգացման վրա, «չնայած վերջին 3 տարիներին բավականին աշխուժություն է նկատվում այս ոլորտում, քանի որ էսպես շատացել են միջազգային համագործակցությամբ իրականացվող ծրագրերը»: Ըստ նրա՝ մինչև 2008 թ-ը ոչ մի միջազգային պայմանագիր գիտության ոլորտում կոմիտեն չի ունեցել: «Իսկ այժմ կնքված է ավելի քան 15 պայմանագիր, որից 12-ը միջազգային: Իսկ գիտությունն առանց միջազգային համագործակցության դժվար է պատկերացնել»,- շեշտեց Ս. Հարությունյանը:

Նրա խոսքով՝ կոմիտեն այսօր ֆինանսավորում է գիտական գործուղումներ: «Վերջին 3 տարիների ընթացքում ավելի քան 100 գործուղումներ են եղել, եւ մեր ճանաչված գիտնականներն աշխարհի տարբեր մասերում հանդես են եկել զեկուցումներով»,- նշեց ԳՊԿ նախագահը՝ ավելացնելով, որ կոմիտեն այժմ ի վիճակի է ֆինանսավորելու միջազգային գիտաժողովներ: «Ընթացիկ տարում ավելի քան 34 միջազգային գիտաժողով պետք է ֆինանսավորենք»,- ասաց նա:

## ԳՊԿ-ն ֆինանսավորման է երաշխավորել շուրջ 200 գիտական ծրագիր

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեն 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ֆինանսավորման է երաշխավորել շուրջ 200 գիտական ծրագիր: Ինչպես այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, այդ թիվը զգալիորեն զիջում է 2010 թ-ի տվյալներին, երբ ֆինանսավորվել էր 711 թեմա: «Քանակի նմանատիպ նվազումը պատճառաբանված է, քանի որ այդ 711 թեմաների զգալի մասի ֆինանսական ծավալները փոքր էին, ինչն էլ հնարավորություն չէր տալիս դրանց հաջող իրականացման համար: Բացի այդ՝ կային թեմատիկ բազմաթիվ կրկնություններ», - ասաց նա՝ հավելելով, որ քանակի նվազումը կապված է նաեւ նրա հետ, որ Գիտության պետական կոմիտեն բազմաթիվ միջազգային մրցույթներ է իրականացնում: «Մեր պետությունն այսօր թեմատիկ ծրագրերով ի վիճակի է 200 եւ փոքր-ինչ ավել ծրագրեր ֆինանսավորվել: 711-ը խիստ ուռճացված էր», - նշեց նա:

Ս. Հարությունյանի խոսքով՝ նախորդ վեց ամիսների ընթացքում ամփոփվել են գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքները: Մրցույթի արդյունքում ֆինանսավորվել են շուրջ 130 գիտական ծրագրեր: 2010 թ-ի նոյեմբերի 23-ին հայտարարված «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթի արդյունքում ֆինանսավորվել է 32 գիտական ծրագիր: Նրա խոսքով՝ հայտարարվել էւ անցկացվել են «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2011» մրցույթը, որի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 5 գիտական ծրագիր:

Հիմնարարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ գիտական հետազոտությունների ծրագրերի աջակցության համատեղ մրցույթի արդյունքում ֆինանսավորվել են 17 գիտական ծրագրեր:

Ամփոփվել են կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի հայտերի ընդունումը: Ներկայացված 43 հայտերից 17-ը երաշխավորվել են ֆինանսավորման: «Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համատեղ գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ փոխգործակցության ծրագրի բաց մրցույթի արդյունքները դեռ ամփոփված չեն», - ասաց նա:

**Խախտումներ՝ պետրոլեից բազային ֆինանսավորում ստացող 3 գիտական կազմակերպություններում**

Ընթացիկ տարվա ապրիլ-հունիս ամիսներին Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեն մոնիթորինգ է անցկացրել մի շարք կազմակերպություններում: Ինչպես այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, մոնիթորինգն իրականացվել է պետական բյուջեից բազային ֆինանսավորում ստացող 3 գիտական կազմակերպությունում՝ Երեւանի պետական համալսարանում, Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում եւ ՀՀ ԳԱԱ Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում, որտեղ բացահայտվել են թե՛ իրավական, թե՛ ֆինանսական բնույթի խախտումներ:

Մոնիթորինգն իրականացվել է 4 անձից բաղկացած հանձնախմբի միջոցով, որի կազմում 2 ներկայացուցիչները եղել են կոմիտեից: «Մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվել են կոմիտեի կողմից իրականացված ֆինանսավորումները, ֆինանսական միջոցների ծախսերը, դրանց իրականացման նպատակահարմարությունն ու համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Ուսումնասիրվել են նաեւ բոլոր ծրագրերի գծով իրականացվող աշխատանքային գործընթացները», - նշեց նա:

Ս. Հարությունյանի հավաստմամբ՝ մոնիթորինգի արդյունքում մի շարք շեղումներ են հայտնաբերվել: «Ֆինանսական միջոցների ծախսման որեւէ խախտում կամ շեղում ԵՊՀ-ում չի գրանցվել, սակայն առկա են ընդհանուր բնույթի խախտումներ աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման վերաբերյալ փաստաթղթերում», - նշեց նա՝ օրինակ բերելով Բյուրականի աստղադիտարանը, որտեղ ստուգման պահին գրանցված 86 աշխատակիցներից ոչ մեկի հետ կնքված չի եղել աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող որեւէ իրավական փաստաթուղթ:

Նրա խոսքով՝ 3 կառույցներում էլ չեն եղել դրույքաչափերի հաշվարկման միասնական համակարգեր: «Արձանագրվել են նաեւ պետական բյուջեից տրամադրվող միջոցների ոչ նպատակային ծախսումներ», - ասաց նա:

Այս բոլոր բացթողումների հետ կապված համապատասխան հանձնարարականներ են տրվել տվյալ հիմնարկներին, որոնք առաջիկա ամիսների ընթացքում այդ բացթողումները պետք է շտկեն եւ ներկայացնեն համապատասխան հաշվետվություն:

## Գիտական ծրագիր արցախցիների մասնակցությամբ

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը հայտնեց, թե՛ քանի որ ԼՂՀ գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցները փոքր են, ՀՀ պետական բյուջեից հավելյալ ֆինանսավորում կլինի:

-Պրն Հարությունյան, դուք նշեցիք, որ առաջին անգամ, այս տարի, մրցութային կարգով, ՀՀ պետբյուջեից կֆինանսավորվեն Արցախում ապրող և աշխատող գիտնականների ներկայացրած 5 ծրագրեր: Ի՞նչ ոլորտներ են նրանք ներկայացնում:

- Ինչպես արդեն ասացի, Արցախի գիտնականները, Հայաստանի գիտնականների հետ հավասար իրավունք ունեն մասնակցելու մեր ծրագրերին:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ ըստ մեր նախնական պայմանավորվածության, ոլորտները ընտրել են իրենք. գյուղատնտեսություն, կենսաբանություն, քիմիա, նոր նյութեր , քաղաքաշինություն: Հենց իրենց ընտրած ոլորտներում էլ հայտարարվել էր մրցույթ, որում հաղթեցին այն 5 ծրագրերը:

Արցախցիների փորձառու գիտական կոնսուլտանտները Հայաստանից են: Այդպես որոշեցինք, քանի որ Արցախը նմանատիպ ծրագրերի փորձ չունի: Իսկ գիտական թիմը, բնականաբար, Արցախից է՝ ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը:

## Գիտական կազմակերպությունների ֆինանսական ոլորտներում խախտումներ են հայտնաբերվել

Այս տարի ապրիլ-հունիս ամիսներին առաջին անգամ մոնիթորինգի են ենթարկվել գիտական կենտրոնները:

Ինչպես այսօրվա ասուլիսին տեղեկացրեց ԿԳՆ գիտական պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, 6 ծրագրի մասով մոնիթորինգն իրականացվել է 3 գիտական կազմակերպությունում, որոնցից ԵՊՀ-ում՝ 4 ծրագիր, ԿԳՆ Բժշկական սաբանական միջազգային հետբուհական կենտրոնում (ԲԿՄՀՈԻԿ)՝ 1 ծրագիր և ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստաղիտարան» ՊՈԱԿ-ում՝ 1 ծրագիր: «Բացահայտվել են թե իրավական, թե տնտեսական բնույթի խախտումներ», - տեղեկացրեց Հարությունյանը:

Նա հաղորդեց, որ ԲԿՄՀՈԻԿ-ը ստացել է 9 մլն-ից ավելի ֆինանսավորում, սակայն ստուգման պահին ծախսած է եղել ավելի քան 1 միլիոնը, «այսինքն՝ գումարը ստացել են, բայց չեն ծախսել, իսկ մնացած միջոցների առումով տեղի է ունեցել պետական միջոցների ոչ նպատակային ծախսում»: «Խախտվել է նաև գնումներ կատարելու ընթացակարգը, կենտրոնում գնումներ կատարող մարմին չի ստեղծվել, բացի այդ, այնպիսի ապրանքների համար, ինչպիսիք են բենզին, ավտոգազ, տպագրական ներկերի և սարքերի ձեռքբերման դեպքում որևէ փաստաթղթային հիմնավորվածություն կամ մասնագիտական տեխնիկական եզրակացություն չի արձանագրվել», - ասաց կոմիտեի նախագահը:

Հարությունյանը հաղորդեց, որ ԲԿՄՀՈԻԿ-ն առհասարակ կոմիտե չի ներկայացրել 2011թ. առաջին եռամսյակի որևէ ֆինանսական հաշվետվություն, որն իրենց միջև կնքված պայմանագրի խախտում է:

Բյուրականի աստղադիտարանին, ըստ բանախոսի, տրամադրվել է ֆինանսավորում գործուղումների նպատակով, որի մի մասը չի իրացվել, և պիտի արձանագրվեր որպես դեբիտորական պարտք, սակայն դա ևս չի եղել:

«Այս բոլոր բացթողումների հետ կապված համապատասխան հանձնարարականներ են տրվել հիմնարկներին, որոնք այս բոլոր բացթողումները պետք է շտկեն 2-3 ամիսների ընթացքում և ներկայացնեն համապատասխան հաշվետվություն», - նշեց նա:

Ֆինանսական խախտումների մասով պատասխանատվության ենթարկելու մասին հարցին ի պատասխան Հարությունյանն ասաց. «Դե էդ բացթողումներն էնպիսին են, որ ուղղման ենթակա են, սարսափելի բաներ չեն... Բայց դե պետական միջոցներից տրամադրված գումարները պիտի ծախսվեն նպատակային»:

**Փտող գիտական կենդանիներին պահպանելու համար պատրաստակամ են հատկացումներ անել գիտության սուղ բյուջեից**

Հայաստանի գիտության բյուջեն՝ դրամաշնորհային ծրագրերը ներառյալ, կազմում է մոտ 40 մլն դոլար, այսինքն խորհրդային շրջանի ֆինանսավորումից ավելի քան տասն անգամ պակաս: Այս մասին այսօր հայտնեց Կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: «Հայաստանն էդ տեսանկյունից օրիգինալ չի,- ասաց նա,- էդ վիճակն է և Ռուսաստանում, և Ուկրաինայում, և մնացած բոլոր երկրներում»:

Սակայն, ըստ բանախոսի, վերջին 3-4 տարիներին գիտական ոլորտում բավական աշխուժություն է նկատվում: «Նախ, էապես շատացել են միջազգային համագործակցությամբ իրականացվող ծրագրերը, մինչև 2008թ. գիտության ոլորտում ոչ մի միջազգային պայմանագիր մենք չենք ունեցել, այսօր կնքված է ավելի քան 15 պայմանագիր, որոնցից 12-ը՝ միջազգային: Իսկ գիտությունը բաց համակարգ է, և դրա զարգացման համար միջազգային համագործակցությունը ուղղակի անհրաժեշտ է», - ասաց Հարությունյանը:

Ըստ Գիտապետկոմի նախագահի՝ այսօր արդեն ի վիճակի են ֆինանսավորել միջազգային գիտաժողովներ, անցկացվում են ամառային դպրոցներ, հատուկ երիտասարդների համար մրցույթներ և այլն:

Պատասխանելով այն հարցին, որ ի՞նչ է արվում ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ինստիտուտի թանգարանում փտող կենդանիներին պահպանելու համար, նա պատասխանեց. «Այդ թանգարանի ֆինանսավորումն իրականացնել այսօր մենք ի վիճակի չենք, քանի որ գիտության պետական կոմիտեն ֆինանսավորում է գիտական ծրագրեր: Թանգարանի պահպանումը, ըստ երևույթին, կուլտուրայի նախարարության խնդիրն է, ես շատ ցավում եմ, իրոք, դա շատ արժեքավոր թանգարան է, և ես չգիտեմ, միգուցե դրա մասին արժե շատ լուրջ մտածել: Համենայն դեպս, այդ ուղղությամբ կոմիտեն որոշակի քայլեր կցուցաբերի շատ շուտով: Ես չգիտեմ՝ ինչպես կարելի է կոմիտեի միջոցները ծախսել այդ թանգարանի պահպանման համար»:

**Բյուրականի աստղադիտարանում մարդիկ աշխատել են առանց պայմանագրի. բացահայտում է Ս. Հարությունյանը**

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր ամփոփելով 2011թ-ի առաջին կիսամյակի կոմիտեի գործողությունների հիմնական ուղղությունները, կանգ առավ նաև գիտական կազմակերպություններում անցկացված մոնիթորինգի արդյունքներին: Այդ մոնիթորինգը հիմնականում միտված էր հասկանալու, թե ինչպե՞ս են հիշյալ կազմակերպությունները ծախսում պետական բյուջեով իրենց հասանելիք գումարները:

Ըստ այդմ, ապրիլ-հունիս ամիսներին կոմիտեն մոնիթորինգի է ենթարկել բյուջեից բազային ֆինանսավորում ստացող երեք գիտական կազմակերպություն վեց ծրագրի մասով՝ 4 ծրագիր Երևանի պետական համալսարանում, 1 ծրագիր ԿԳՆ Բժշկական սաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում (ԲԿՄՀՈԻԿ) և Բյուրականի աստղադիտարան ՊՈԱԿ-ում. ,Կոմիտեն նման մոնիթորինգով երբևիցե չի անցկացրել,-ընդգծեց Ս. Հարությունյանը:

Նշելով, որ դրա արդյունքում բացահայտվել են թե՛ իրավական, թե՛ ֆինանսական բնույթի մի շարք խախտումներ, այդուհանդերձ կոմիտեի նախագահի խոսքերով, դրանք ուղղելի են և երկու-երեք ամիս ժամանակ է տրվել շտկելու համար. ,Եթե այս ժամկետում շտկումներ չլինեն՝ կազմակերպությունները կպատժվեն:

Բերեց նաև մանրամասներ, թե կոնկրետ ի՞նչ խախտումների մասին է խոսքը: Այդպես, օրինակ, Բյուրականի աստղադիտարանին ծրագրերի նպատակով տրամադրված 5 մլն դրամից միայն 1 մլնից ավելին է ծախսվել նպատակային, մնացած գումարը դասվում է ոչ նպատակային ծախսերի մեջ: Բացի այդ, փաստացի աշխատող 86 աշխատակիցների հետ չկա կնքված աշխատանքային պայմանագրեր և նույնը կրկնվում է նաև ԲԿՄՀՈԻԿ-ում: Ի դեպ, այս կազմակերպությունն էլ կոմիտեին չի ներկայացրել առաջին եռամսյակի հաշվետվությունը, ինչը նույնպես դասվում է խախտումների շարքում: Նմանատիպ խախտումներից զերծ է մնացել միայն ԵՊՀ-ն, սակայն այստեղ էլ կան խախտումներ: Բայց, ինչպես ևս մեկ անգամ կրկնեց Ս.Հարությունյանը, դրանք շտկվող բնույթ ունեն:

**Մասնավոր բիզնեսը սկսել է Հայաստանում գիտական ծրագրեր ֆինանսավորել.  
Գիտության կոմիտեի նախագահ**

Հայաստանում 2011թ. ֆինանսավորվելու է 201 գիտական ծրագիր, ընդ որում՝ գիտական ծրագրերին այս տարի ֆինանսավորում է հատկացնում նաև մասնավոր բիզնեսը: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

Գիտության պետական կոմիտեն կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների ֆինանսավորման 43 հայտ է ստացել, որոնցից 37-ը, ի գարմանս Հարությունյանի, գտել են համաֆինանսավորում ՀՀ մասնավոր բիզնեսից եւ մի շարք միջազգային կառույցներից:

Նշենք, որ 2011 թ. կիրառական հետազոտությունների բյուջետային ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ է, որպեսզի գիտնականը իր նախագծի համար մինչեւ 15 եւ ավել տոկոսի շրջանակներում ֆինանսավորում կարողանար գտնել նաև մասնավոր հատվածից:

Նշված մեթոդն ակնհասորեն տվել է իր արդյունքը. գիտնականներն ավելի ակտիվորեն են դիմում մասնավոր բիզնեսին, իսկ վերջինս էլ հետաքրքրություն է ցուցաբերում դրա նկատմամբ:

Կիրառական հետազոտությունների հայտերից 17 լավագույնները կֆինանսավորվեն օգոստոսի 1-ից: Դրանիցի յուրաքանչյուրն արժե մոտ 36 հազար դոլար: Այս գումարը, ըստ Ս. Հարությունյանի՝ լիովին բավարար է ծրագիրն իրականացնելու նպատակով անհրաժեշտ հետազոտություններ կատարելու, գործուղումների, սարքերի ձեռքբերման համար եւ այլն:

«Ընդհանուր առմամբ 201 գիտական ծրագրերի ֆինանսավորումը բավականին լուրջ թիվ է: Եթե հաշվի առնենք, որ ծրագրերի մի մասը կիրառական նշանակություն ունեն, հնարավորություն է ստեղծվում էլ ավելի խորացնել մեր հարաբերությունները մասնավորի հետ»,-ասաց Գիտության պետական կոմիտեի նախագահը՝ հավելելով, որ այդ 201 ծրագրերում ընդգրկված են մինչեւ 35 տարեկան շուրջ 250 երիտասարդ գիտնականներ, ինչը խոսում է այն մասին, որ աշխատանք է տարվում նաև գիտության երիտասարդացման համար

## Հայաստանը մոտ 3 մլն եվրոյի գերժամանակակից սարքավորումներ է ստացել Candle ծրագրի համար

Վերջին մեկ տարում Candle նախագծի շրջանակներում Հայաստանը մոտ 3 մլն եվրոյի տարբեր գերժամանակակից սարքավորումներ է ստացել: Այս մասին [NEWS.am](http://NEWS.am)-ի նովագիայի թղթակցի հետ զրույցում ասաց ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: Նրա խոսքով՝ սպասվում է, որ առաջիկայում Հայաստանը կստանա եւս մոտ 300-400 հազ. եվրոյի սարքավորումներ:

«Դրանք օգտագործած սարքեր չեն, այլ ամբողջովին նոր, ժամանակակից սարքեր, ինչը բավականին լուրջ օգնություն է Հայաստանի համար», - ասաց Ս. Հարությունյանը՝ նշելով որ միջազգային հանրությունը դրական է գնահատում Հայաստանում Candle նախագծի իրականացումը: Ս. Հարությունյանը հույս հայտնեց, որ ստացվող սարքավորումների թիվը դեռեւս կավելանա, իսկ նախագծի իրականացումից հետո Հայաստանում կունենանք գիտության նոր որակ:

«Այս ծրագիրը գիտության ոլորտում մեծ թռիչք կապահովի: Մեզ մոտ արագ տեմպերով կգարգանա նյութագիտությունը, կառուցվածքային կենսաբանությունը, մոլեկուլային դեղաբանությունը եւ այլն», - ասաց Ս. Հարությունյանը:

Նրա համոզմամբ՝ արդի զարգացած տնտեսությունը պետք է լինի բարձր տեխնոլոգիական, իսկ Հայաստանի իրական զարգացման համար Candle-ի նման խոշոր նախագծեր են անհրաժեշտ:

Ս. Հարությունյանը նշեց նաեւ, որ աշխարհում ընդամենը 8-9 պետություն կա, որոնք ունեն ե՛ւ ատոմակայան, ե՛ւ արագացուցիչ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանը այս ծրագրի հաջող գործարկման պարագայում կարող է հայտնվել աշխարհի առավել զարգացած երկրների շարքում:

Նշենք, որ «ԲԵՆԴԼ»-ը (CANDLE-Center for the Advancement of Natural Discoveries using Light Emission) թարգմանաբար՝ սինթրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն է նշանակում, որտեղ գիտնականներն ինտենսիվ լուսային հոսքի օգնությամբ հնարավորություն կունենան հետազոտել մոլեկուլներ, կենսաբանական օբյեկտներ եւ նյութեր:

Շրջակա միջավայրի համար լրիվ անվտանգ արագացուցչային կենտրոնը աննախադեպ կլինի հետխորհրդային, Արեւելյան Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի տարածաշրջաններում:

Փորձագետների գնահատմամբ՝ արագացուցիչի արժեքը գնահատվում է մոտ 100 մլն դոլար: Պետությունը պատրաստ է ֆինանսավորել նախագծի արժեքի 25 տոկոսը:

## Գիտության ազգային կոմիտեի հաշվետվությունը

Գիտության ազգային կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր հրավիրած ասուլիսում ամփոփեց 2011թ-ին առաջին կիսամյակում կառույցի գործողությունները:

Կոմիտեի նախագահը թվարկեց բոլոր այն հիմնական ուղղությունները, որոնց շուրջ իրականացվել են մոնիթորինգներ, բարեփոխումներ և վեր հանվել բացթողումներ:

ՀՀ կառավարության կողմից ընդունվել են հասարակական գիտությունների զարգացմանն ուղղված որոշումներ, որոնք, ըստ բանախոսի, միտված են իրավական դաշտի կատարելագործմանը:

Առաջին կիսամյակում իրականացվել են նաև գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթներ: Ս. Հարությունյանի տեղեկացմամբ՝ Ֆինանսավորվել է շուրջ 130 գիտական ծրագիր:

«Առաջին անգամ անցկացվել է Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր և ֆինանսավորման է երաշխավորվել 5 գիտական ծրագիր», -նշեց Հարությունյանը՝ հավելելով, որ քայլերն են արվում՝ Արցախի գիտնականներին ապահովել նույն հնարավորություններով, ինչ Հայաստանի:

Արդեն 2-րդ անգամ մրցույթ է անցկացվել Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ, որոնց արդյունքները կամփոփվեն սեպտեմբերին:

«Ընդհանուր առմամբ 2011թ-ին ֆինանսավորման է երաշխավորվել շուրջ 201 գիտական ծրագիր, որից 17-ը՝ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված նախագծեր են», - հայտնեց կոմիտեի նախագահը:

Համեմատական անցկացնելով նախորդ տարի ֆինանսավորված ծրագրերի թվի հետ, կոմիտեի նախագահը տեղեկացրեց, որ 2010թ-ի 711 թեմաների փոխարեն 2011թ-ի 138 թեման անտարբերության նշան չէ, պարզապես. ,Այս տարի շատ միջազգային մրցույթներ են իրականացվում, այդ պատճառով կրճատում է եղել: Եվ հետո փորձել են խուսափել թեմատիկ կրկնություններից: Նաև հավելեց, որ պետությունն ի վիճակի է ֆինանսավորել ընդամենը 200 և մի քիչ ավելի նախագծեր:

Անդրադառնալով Հայաստանում ,Քենդլե նախագծի իրականացման սկզբնական փուլի աշխատանքներին, Հարությունյանը կարևորեց դրա շրջանակում գերմանական սարքավորումներով AREAL լազերային բարձր հաճախականային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցումը: Ի դեպ, մեր երկիր են բերվել 3 մլն երվո արժողության սարքավորումներ:

«Ըստ վարչապետի ներկայացրած գործողությունների ծրագիր-ժամանակացույցի՝ նախատեսվում է կոմիտեի պատվիրակության այցերը Գերմանիա, Շվեյցարիա, Ֆրանսիա և Իտալիա՝ «Քենդլ» նախագծի աջակցման նպատակով հուշագրեր ստորագրելու և Հայաստանում դոնոր-համագումար անցկացնելու համար», -ասաց նախագահը:

**ՀՀ-ում մասնավոր հատվածը շահագրգռված է գիտական նոր արդյունքներ ստանալով**

Այսօր ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը մամուլի ասուլիսում ներկայացրեց 2011թ. 1-ին կիսամյակի գործունեության ամփոփումը: Այսպիսով, 2011 թվականի առաջին կիսամյակում կոմիտեի գործողությունները հիմնականում ուղղված են եղել իրավական դաշտի կատարելագործմանը : Սասնավորապես ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին ու ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» և «ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

Անդրադառնալով գիտական ծրագրերի ֆինանսավորման մրցույթներին՝ Սամվել Հարությունյանն ասաց, որ արդեն ամփոփվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքները, որի արդյունքում ֆինանսավորվել են շուրջ 130 գիտական ծրագրեր: Ամփոփվել է նաև «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2010» մրցույթի արդյունքները և ֆինանսավորվել են շուրջ 32 գիտական ծրագրեր:

Բանախոսը նշեց, որ հայտարարվել և անցկացվել են «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր -2011» մրցույթը և ֆինանսավորման երաշխավորվել է 5 գիտական ծրագիր: Նա նշեց, որ այս ծրագիրն առաջին անգամ է իրականացվում, ինչը հնարավորություն է տալիս Արցախի մի շարք գիտական կենտրոններին իրենց գիտական ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից ստանալ հավելյալ ֆինանսավորում : Դուք գիտեք, որ Արցախի պետական բյուջեն բավականին փոքր է և այնտեղ բավականին հաջող գիտնականներ ունենք: Բնականաբար մենք համարում ենք, որ Արցախը ՀՀ մասն է կազմում և Արցախի գիտնականները պետք է ունենան նույն իրավունքները, ինչ որ ՀՀ գիտնականները: Այս ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 5 գիտական ծրագիր, յուրքանչյուրը 4 -ական միլիոն դրամ ֆինանսավորմամբ, այս ֆինանսավորման 80 տոկոսը ՀՀ բյուջեով է իրականացվել, 20 տոկոսը՝ Արցախի բյուջեով,-ասաց Սամվել Հարությունյանը:

Շարունակելով ներկայացնել ծրագրերը՝ նա նշեց, որ հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ գիտական հետազոտությունների ծրագրերի աջակցության համատեղ մրցույթի արդյունքում ֆինանսավորվել են 17 գիտական ծրագրեր:

Իսկ Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համատեղ գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ փոխգործակցության ծրագրի բաց մրցույթի արդյունքները դեռևս ամփոփված չեն: Ի դեպ, նա տեղեկացրեց, որ այս մրցույթը գիտական համագործակցության շրջանակներում եզակի ծրագրերից մեկն է , որին մասնակցում է Ադրբեջանը:

Անդրադառնալով կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի հայտերի ընդունմանը, նա ասաց, որ ներկայացված 43 հայտերից 17-ը երաշխավորվել են ֆինանսավորմամբ : Մա բանախոսի համար զարմանալի էր, քանի որ մրցույթի մասնակցության կարևորագույն պայմաններից մեկն այն էր, որ թիմը պետք է գտներ մասնավոր հատվածից համաֆինանսավորում մինչև 15 և ավելի տոկոս շրջանակներում: «Փաստորեն պարզվեց , որ ՀՀ-ում մասնավոր հատվածը բավականին շահագրգռված է գիտական նոր արդյունքներ ստանալով, և 43 ծրագրերից 37-ը գտել է համաֆինանսավորում, ընդ որում ոչ միայն ՀՀ –ի մասնավոր բիզնեսից, այլ նաև միջազգային մի շարք կառույցներից», -ասաց Մամվել Հարությունյանը:

Նա հավելեց, որ ընդհանուր առմամբ ` 2011 թվականին ֆինանսավորման են երաշխավորվել շուրջ 201 գիտական ծրագրեր:

## Բացթողումներ կան, բայց ուղղման ենթակա են

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր մամուլի ասուլիսում տեղեկացրեց, որ ապրիլ-հունիս ամիսներին անցկացվել է գիտական կազմակերպությունների մոնիթորինգ ԵՊՀ-ում, Բժշկականսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնում և Բյուրականի աստղադիտարանում, և արդյունքում բացահայտվել են մի շարք խախտումներ:

«Կոմիտեն մոնիթորինգ անցկացրեց բյուջեից բազային ֆինանսավորում ստացող 3 գիտական կազմակերպություններում, որի նպատակն է վեր հանել համակարգում առկա բացթողումները, բացահայտել խախտումները և առավել արդյունավետ և հստակ կազմակերպել հետագա գործընթացները», -ասաց Սամվել Հարությունյանը:

Նա նշեց, որ ԵՊՀ-ում ֆինանսական միջոցների ծախսման որևէ խախտում կամ շեղում չի գրանցվել: Այսպիսով, ընդհանուր բնույթի խախտումներ հիմնականում առկա են աշխատանքային հարաբերությունների կանոնակարգմանը վերբերող փաստաթղթերում, օրինակ՝ Բյուրականի աստղադիտարանում գրանցված 86 աշխատակիցներից ոչ մեկի հետ կնքված չի եղել աշխատանքային հարաբերությունները հաստատող որևէ իրավական փաստաթուղթ, ինչպես նաև բժշկականսաբանական հետբուհական կենտրոնում հաստիքացուցակով հաստատված 21 աշխատակիցներից 8-ի հետ ևս աշխատանքային փոխհարաբերությունները հաստատող փաստաթղթերը բացակայում են: Նա տեղեկացրեց, որ բոլոր 3 կազմակերպություններում էլ հաստիքացուցակում ընդգրկված աշխատակիցների համար չի եղել դրույքաչափերի հաշվառման միասնական հստակ համակարգ:

Իսկ ֆինանսական բնույթի խախտումներ հիմնականում հայտնաբերվել էր Բյուրականի աստղադիտարանում, արձանագրվել է պետական բյուջեից տրամադրված միջոցների ոչ նպատակային ծախսումներ՝ գումարը ստացել են և դեռ չեն ծախսել: Խախտումներ է արձանագրվել նաև պետական գնումների ընթացակարգում: Բժշկականսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոնը կոմիտե ընդահներապես չի ներկայացրել 2011թ. որևէ ֆինանսական հաշվետվություն:

«Այս բոլոր բացթողումների հետ կապված, համապատասխան հանձնարարականներ են տրվել տվյալ հիմնարկներում, որոնք 2,3 ամիսների ընթացքում այս բացթողումները պետք է շտկեն և տան համապատասխան հաշվետվություն», -հայտնեց բանախոսը:

Mardik.am-ի հարցին, թե բացթողումների և խախտումների համար պատժվողներ եղե՞լ են, նա պատասխանեց. «Բացթողումներն այնպիսին են, որ ուղղման ենթակա են, այսինքն՝ նրանք կարող են կարճ ժամանակում այդ խնդիրները կարգավորել, եթե դա չիրականացավ բոլորը կպատժվեն»:

**Եթե 250 երիտասարդներից 10 տոկոսն էլ մնան, ես կհամարեմ, որ մենք շատ մեծ գործ արեցին**

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց, որ վերջին 3- 4 տարիներին ակտիվություն է նկատվում գիտական ծրագրերում և նաև ակտիվացել են միջազգային կազմակերպությունների իրականացրած ծրագրերը:

Նա նշեց, որ Ֆինանսավորված 201 ծրագրերում մինչև 35 տարեկան ավելի քան 250 երիտասարդներ են մասնակցում. «Այս 250 երիտասարդներից եթե 10 տոկոսն էլ մնա ու աշխատի Հայաստանում, ես կհամարեմ, որ մենք շատ մեծ գործ արեցինք, որովհետև սա հավելյալ աշխատավարձ է ապահովում երիտասարդներին», -ասաց Սամվել Հարությունյանը և ավելացրեց, որ բազային ծրագրերն իրականացնելու համար երիտասարդ գիտնականը բացի իր աշխատավարձից և գրանտային ծրագրերից ստանում է հավելյալ աշխատավարձ, և Սամվել Հարությունյանի գնահատմամբ, այդ աշխատավարձը քիչ չի՝ մինչև 65 հազար դրամին մոտ հավելյալ գումար է կազմում:

Mardik.am-ի հարցին, թե պետությունն ի՞նչ քայլեր է անում, որ գոնե 10 տոկոսը գնա, ոչ թե այդքանը մնա, որովհետև դուք ձեր ասածով փաստեցիք, որ մեծ թով ուղեղների արտահոսք կա, Սամվել Հարությունյանը պատասխանեց. «Ուղեղների արտահոսքը պետք է լինի, բանը նրանում է, որ այսօրվա գիտության բյուջեն այնքան փոքր է և աշխատավարձերն այնքան ցածր են, որ այն գիտնականը, ով գիտության մեջ գրանցել է որոշակի հաջողություններ, բնականաբար արտերկրում պահանջարկ ունի, և չես կարող մարդուն ստիպել, որ չհեռանա, եթե այնտեղ ավելի շատ են վճարում քան մեզ մոտ, բնականաբար այդ մարդիկ գնում և այնտեղ են աշխատում»:

Սամվել Հարությունյանը նշեց, որ հուսով է, որ երիտասարդներին միտված ծրագրերի իրականացման պարագայում վերադարձողների թիվը պետք է որ շատանա :

Մեր հավելյալ հարցին, թե շահագրգռող ինչ -որ բան չի՞ նախատեսվում՝ երիտասարդ գիտնականներին պահելու համար, նա ասաց, որ գրանտները հնարավորություն են տալիս լավ աշխատող գիտնականներին ստանալ հավելյալ աշխատավարձ : Այսպիսով, նա նշեց, որ լավ աշխատող գիտնականը սկզբունքորեն կարող է մինչև 200 հազար դրամ պետական բյուջեից գումար ստանա: «Այսինքն՝ մենք հնարավորություն ենք տվել գիտնականին իր ուղեղի հնարավորություններն օգտագործել ու փող աշխատել, առաջ այդ բանը չկար, իսկ հիմա բազմաթիվ ծրագրերի կարող է մասնակցել,-ասաց Սամվել Հարությունյանը:

## Ի՞նչ խնդիրներ ունեն երիտասարդ գիտնականները

Կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Մամվել Հարությունյանն այսօր ամփոփել է 2011-ի առաջին կիսամյակի գործունեությունը:

Նա նշել է, ընդհանուր առմամբ՝ 2011 թվականին ֆինանսավորվել եւ երաշխավորվել են շուրջ 184 գիտական ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ ավելի շատ են երիտասարդների կողմից ներկայացված նախագծերը:

Մայիսի 18-ի կառավարության որոշմամբ ընդունվել են գիտության զարգացմանը եւ դրանց իրականացմանը նպաստող մի շարք ծրագրեր:

2010-ի ընթացքում ֆինանսավորված 711 ծրագրերում թեմաների ղեկավարների զգալի մասը, ըստ Հարությունյանի, երիտասարդ գիտնականներ են:

«711 թեմաներում թեմաների ղեկավարների 2-3%-ը մինչեւ 35 տարեկան երիտասարդներ են, որը բավականին լուրջ թիվ է, եթե այս երիտասարդների 10%-ն էլ աշխատեն Հայաստանում՝ եւ կհամարեն, որ մենք շատ մեծ գործ արեցինք», - ասաց Հարությունյանը:

Գիտպետկոմի նախագահի պնդմամբ, գիտությամբ զբաղվող երիտասարդների թվի աճ է նկատվում: Իսկ «Հայկական աստղագիտական ընկերակցության» համանախագահ Արեգ Միքայելյանը «Մաքս Լիբերթի»-ի հետ զրույցներից մեկում մտահոգություն էր հայտնել, թե գիտության ոլորտում ֆինանսական հատկացումներն այնքան աննշան են, որ դրանց մասին խոսելն ավելորդ է:

«10-20% ավելացումը միեւնույնն է ոչինչ չի տա: Եկեք պարզ խոսենք, մեզ մոտ հիմա գիտնականը ստանում է 35.000 դրամ աշխատավարձ, ենթադրենք դա դարձնենք 40 կամ 50 հազար, միեւնույնն է, դա այն գումարը չէ, որով մենք կարողանանք երիտասարդներին գրավել դեպի գիտություն: Տեղաշարժեր կան, բայց դրանք շատ չնչին են, այն մասշտաբի քայլեր չեն, որ կտրուկ փոխեն գիտության վիճակը», - կարծում է Արեգ Միքայելյանը:

Երիտասարդ գիտնական Արսեն Առաքելյանը ներկայացնում է գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը: Որպեսզի կանխվի երիտասարդ գիտնականների արտահոսքը, զրուցակցիս խոսքով, հարկավոր է երիտասարդ գիտական ներուժի զարգացման համար ռեսուրսներ նախատեսել:

«Որովհետեւ այս պահին ռեսուրսները հատկացվում են գիտական դպրոցների պահպանման վրա, բայց ռեսուրսներ, որոնք թույլ կտան երիտասարդ գիտնականին աճել՝ դրա ուղղությամբ դեռ գումար չի հատկացվում», - կարծում է Արսենը: